ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 1041-Ա « 19 » մարտի 2024թ.

ԸՆԴՈՒՆՄԱՆ-ՀԱՆՁՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՁԵՎԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի փետրվարի 13-ի N75-Ա որոշումը և Երևանի քաղաքապետի 2024 թվականի փետրվարի 23-ի հ.694-Ա որոշումը.

1.Երևան համայնքի ենթակայության «Ջրային կառույցների» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) հաշվեկշռում հաշվառված՝ ք.Երևան, Հալաբյան փողոցի հ.31/2 հասցեում գտնվող՝ 1356.0քմ մակերեսով հողամասը /անշարժ գույքի սեփականության /օգտագործման/ իրավունքի գրանցման 09.07.2009թ. հ.2531736 վկայական/ ու 374.8քմ մակերեսով շինությունը, ինչպես նաև սույն որոշման հ.1 հավելվածում ընդգրկված տրանսպորտային միջոցները /ավտոմեքենաները/ որպես նվիրատվություն Երևան համայնքի հաշվեկշռում ընդունելու նպատակով, ստեղծել ընդունման-հանձման հանձնաժողով՝ համաձայն հ.2 հավելվածի:

2.Հանձնարարել ընդունող հանձնաժողովին՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում իրականացնել Ընկերության գույքերի՝ Երևան համայնքի տնօրինությանը հանձնելու գործընթացը:

3.Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Ընկերության տնօրենի և սույն որոշմամբ ստեղծված ընդունող հանձնաժողովի նախագահի վրա:

4.Որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն իրականացնում է Երևանի քաղաքապետի տեղակալ Լևոն Հովհաննիսյանը:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

Հավելված 1
Երևանի քաղաքապետի
19.03. 2024թ.
հ. 1041-Ա որոշման

ՑԱՆԿ
«ՋՐԱՅԻՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵԿՇՌՈՒՄ ՀԱՇՎԱՌՎԱԾ ԵՎ ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ ՓՈԽԱՆՑՎԱԾ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ

Մակնիշը	պետհամարանիշը	հաշվառման վկայագիրը	թողարկման տարեթիվը	Հաշվեկշռային (մնացորդային) արժեքը /ՀՀ դրամ/
«Hyundai H100»	212LU01	PB837284	1997	815,302
«Chevrolet Cruze»	771LU01	SB993024	2013	3,732,184
«Volkswagen ID4 Crozz Pure Plus»	340CQ61	YB120511	2022	15,188,831

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ**

Հավելված 2
Երևանի քաղաքապետի
19.03. 2024թ.
հ. 1041-Ա որոշման

ԿԱԶՄ
«ՋՐԱՅԻՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ
ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԻՑ ԳՈՒՅՔՆ ԸՆԴՈՒՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

Հանձնաժողովի նախագահ

Վահան Առուշանյան	Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի կոմունալ տնտեսության վարչության աղբահանության և սանմաքրման բաժնի պետ

Հանձնաժողովի անդամներ

Արման Ավետիսյան	Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի մատակարարման և տեխնիկական սպասարկման վարչության գլխավոր մասնագետ
Երվանդ Պողոսյան	Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության հողի ընթացիկ հաշվառման և հողօգտագործման բաժնի պետ
Անահիտ Խուդոյան	Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական վարչության հաշվապահական հաշվառման և հաշվետվությունների բաժնի առաջատար մասնագետ

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ**